**600.0097.07.03.08**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2008 թվականի №97Ա
քաղ. Երևան

### «ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2008-2010 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ժդ) կետը, 28-րդ հոդվածի 1-ին կետի ը) ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2008-2010 թվականների ներդրումային ծրագրին՝ 45 188,5 մլն դրամ ծավալով՝ առանց ավելացված արժեքի հարկի, հետևյալ ուղղություններով.
   1) գազափոխադրման համակարգի ընդլայնում՝ 20 030,0 մլն դրամ՝ համաձայն №1 հավելվածի,
   2) գազափոխադրման համակարգում Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցում և ընդլայնում՝ 2 662,7 մլն դրամ՝ համաձայն №2 հավելվածի,
   3) գազափոխադրման համակարգի վերակառուցում՝ 1 859,4 մլն դրամ՝ համաձայն №3 հավելվածի,
   4) գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 668,9 մլն դրամ՝ համաձայն №4 հավելվածի,
   5) գազաբաշխման համակարգի ընդլայնում՝ 3 447,0 մլն դրամ՝ համաձայն №5 հավելվածի,
   6) գազաբաշխման համակարգի վերակառուցում՝ 6 109,4 մլն դրամ՝ համաձայն №6 հավելվածի,
   7) գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 10 411,1 մլն դրամ՝ համաձայն №7 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայություն-ները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի մարտի 12-ի «ՀայՌուս-գազարդ» փակ բաժնետիրական ընկերության 2007-2009 թվականների ներդրու-մային ծրագրին համաձայնություն տալու մասին» №85Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք.Երևան
7 մարտի 2008թ.
ժամը 16$^{00}$